

ՔՐԻՍՏՈՍ՝ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ԴԻՄԱՑ

(Շաբ. տե'ս «Բազմավէպ» 1987, քիւ 1-4, էջ 112-121)

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Նախորդ գլուխներուն մէջ ցոյց տուինք թէ Քրիստոս Աստուծոյ Որդին է, Քրիստոս Աստուած է: Եւ այս հաստատումին որպէս ապացոյց բերինք՝ Յիսուսի գործած անթիւ հրաշքները, մասնաւորապէս իր հրաշալի յարութիւնը:

Այժմ, ներկայ գլուխին մէջ, նոր փաստ մըն ալ պիտի աւելցընենք, ցոյց տալու համար Քրիստոսի աստուածութիւնը, Անոր վարդապետութեան աստուածային ըլլալը:

Այս փաստը կ'առնենք Եկեղեցւոյ հազարաւոր մարտիրոսներէն, որոնք իրենց արիւնը թափեցին Քրիստոսի համար:

Պատմական իրողութիւն մըն է, որ Եկեղեցւոյ առաջին օրերէն մինչեւ մեր օրերը, անհաշուելի թիւով հաւատացեալ՝ ալեգարդ ծերունիներ ու տրեղծ մանուկներ, փափկասուն տիկիներ ու օրիորդներ, զարգացած մարդիկ ու տղէտներ, վերջապէս ամէն վիճակի պատկանող անձեր, ամենասոսկալի տանջանքներու դիմանալով, դերմարդկային հերոսութեամբ իրենց արիւնը թափած են՝ վկայելու համար Քրիստոսի աստուածութեան:

Ներկայ տողերով ցոյց պիտի տանք, որ այսպիսի երեւոյթ մը եզական է եւ նմանը չունի բոլոր կրօններու պատմութեան մէջ, եւ թէ միեւնոյն ատեն անառարկելի եւ քերհամոզիչ փաստ մըն է՝ Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալուն:

Բանանք Եկեղեցւոյ պատմութեան առաջին շրջանի էջերը: Բոլորն ալ արիւնոտ էջեր են, անհամար մարտիրոսներու արիւնով գրուած:

Առաջին լուսապսակ ունեցող նահատակն է՝ Ս. Ստեփանոս սարկաւազ, որ Յիսուսի յարութենէն քիչ ժամանակ ետք, դիւցազնական արիւնթեամբ, քահանայապետերու առջեւ կը վկայէ թէ Քրիստոս

Աստուծոյ Որդին է, եւ քարերու հարուածներէն ջախջախուած կ'աւանդէ հոգին, Յիսուսի նման ներելով զինք սպաննողներուն:

Ս. Ստեփանոսին կը յաջորդէ Յովհաննէս աւետարանիչին եղբայրը՝ Յակոբոս առաքեալ, որ կը գլխատուի քրիստոսատեաց Հերովդէս Թադաւորին հրամանով, Քրիստոսի հետեւող ըլլալուն համար:

Նորակազմ Եկեղեցւոյ սակաւաթիւ անդամները կ'ենթարկուին սուր հալածանքներու եւ չարչարանքներու:

Քրիստոնէութեան սարսափազդու թշնամին՝ Սողոմը, հրաշքով կը դառնայ Պողոս, կ'ըլլայ քրիստոնէութեան ամենաշնորհաւոր ջատագովը եւ քարոզիչը, որ Պետրոս առաքելապետի նման, յետ տառապալից առաքելական կեանքի, 64 թուականին, կը ձերբակալուի եւ Հռոմի մէջ կը գլխատուի: Նոյն ժամանակաշրջանին Պետրոս առաքեալն ալ կը խաչուի գլխովայր:

Միւս բոլոր առաքեալներն ալ, քացի Յովհաննէսէն, կ'աթմանան մարտիրոսութեան պսակին:

Յովհաննէս աւետարանիչն ալ, հեթանոսներու կողմէ, նուազած ձէթի մէջ տանջուելէ ետք, խոր ծերութեան մէջ հոգին կ'աւանդէ: Ան, որպէս ակնատես եւ ակննջալուր վկայ, կը դէժէ իր Աւետարանը, անմահացնելով Յիսուսի կեանքը, խօսքերը եւ հրաշքները, որպէսզի, անչափս ինք. կ'ըսէ, «Դուք հաւատաք, որ Յիսուս Քրիստոսն է, Աստուծոյ Որդին» եւ դուք հաւատարմով յաւիտենական կեանք ընդունիք Անոր անունով» (Յովհ. Ի. 30):

Յիսուսի բուռն արտաքերտերուն եւ աշակերտներուն թափած արիւնը, բոցավառ հրդեհի նման, Քրիստոսի վարդապետութիւնը կը տարածեն աշխարհի չորս ծագերուն:

Նոյն շրջանի աշխարհի մայրաքաղաք՝ աշխարհակալ Հռոմի մէջ իսկ, ուր հազիւ քրիստոնէութիւնը թափանցեալ սկսած էր, հռոմայեցի կայսրներ՝ քրիստոնեաները հալածելու եւ բնաջնջելու անողորմ վճիռներ կ'արձակեն:

Արիւնաբոս Ներոն առաջին կայսրը կ'ըլլայ, որ 64 թուականին հրովարտակ մը կը հանէ՝ քրիստոնեաները հալածելու եւ սպաննելու համար:

Եւ ահա կը սկսի ահաւոր ջարդը նորադարձ քրիստոնեաներուն: Անոնցմէ շատեր կը ձերբակալուին, քանտրու մէջ անլուր տանջանքներու կ'ենթարկուին, կը սպաննուին, կրկէսներու մէջ վայրի կենդանիներու կեր կը դառնան:

Ներոնէն ետք եկաւ Դոմիտիանոս կայսրը, որուն հրովարտակով բոլոր քրիստոնեաները դատապարտուեցան որպէս ամպարիշտներ:

Ապա եկաւ Ատրիանոս, Անտոնինոս Պիոս, Տրալանոս, Մարկոս Աւրելիանոս, Դեկոս, եւայլն:

Հալածանքներու ամէնէն սոսկալիներէն մէկը եղաւ Դիոկղետիանոս կայսեր հանած Հալածանքը, որ տարածուեցաւ կայսրութեան բոլոր երկիրներուն մէջ:

Եւրոպայի, Ասիոյ, Ափրիկէի բոլոր նահանգներուն մէջ տեղի ունեցան սոսկալի ջարդեր, աննկարագրելի չարչարանքներով նահատակուեցան քրիստոնեաներ, որոնք կը նկատուէին բոլոր չարիքներու արմատը:

Տերտուղիանոս (155-220), որ ականջալուր վկայ էր այդ հալածանքներուն՝ կը վկայէ թէ քրիստոնեաները պատճառ նկատուած էին հասարակաց բոլոր չարիքներուն, բոլոր զժախտութիւններուն: Եթէ Տիբերիս գետը յորդի, եթէ Նեղոսը տաշտերը չորոգէ, եթէ անձրեւ չգայ, եթէ երկիրը սասանի, եթէ սովը, ժանտախտը տարածուի, անմիջապէս կը պոռան. քրիստոնեաները առիժներուն նետելու է:

Եթէ ուրիշ որեւէ կրօնք այսքան ահաւոր, համատարած հալածանքներու ենթարկուած ըլլար, եթէ ոչ բնաջնջուած՝ առեւտուղն չնչին հետեւորդներ միայն պիտի ունենար:

Դժոխքի ոյժերը փորձեցին Քրիստոսի Եկեղեցին իր օրօրոցին մէջ խեղդել, բայց չյաջողեցան, ըստ Յիսուսի մարգարէական խօսքերուն թէ՝ «Դժոխքի դռները պիտի չյաղթահարեն անոր» (Մատթ. Ժ. 2. 18):

Երեք առաջին դարերուն տեղի ունեցած մահասփիւռ հալածանքներէն ետք, Քրիստոսի Եկեղեցին տ'չ միայն կամպուն մնաց՝ այլ անելի զօրացաւ եւ ծաղկեցաւ:

313 թուականին, Կոստանդիանոս կայսրը, Միլան քաղաքին մէջ, լոյս ընծայեց Հռովարտակ մը, որով ազատութիւն կը շնորհէր քրիստոնեաներուն:

Այդ նշանաւոր Հռովարտակին մէջ կայսրը կը գրէ՝ Մենք վճռեցինք քրիստոնեաներուն եւ բոլոր միւսներուն շնորհելու, որ ազատ կերպով ընդգրկեն իրենց նախադաս համարած կրօնքը, որպէսզի երկիրնք մէջ բնակող աստուածութիւնը հաշտ եւ նպաստաւոր ըլլայ, թէ՛ մեզի եւ թէ՛ մեր տիրապետութեան տակ ապրողներուն:

Քրիստոնէութիւնը շունչ մը առաւ, Եկեղեցին գետնի տակէն, դետնադամբաններէն՝ լոյս աշխարհ ալաւ, ամէն կողմ շինուեցան մատուռներ, եկեղեցիներ, որոնց վրայ կը փայլէր Ս. Պաշչը:

Կարծես վերջ գտած ըլլային հալածանքները եւ նոր դարադուրս մը բացուած ըլլար քրիստոնեաներուն համար:

Բայց անհա, կարաբրակաւ աթոռ բարձրացաւ Կոստանդիանոսին թոռ՝ Յուրիանոս (361-369), որ ուրանալով քրիստոնէութիւնը՝ ուղեց վերականգնել հեթանոսութիւնը:

Հալածանքի փոթորիկը կրկին անցաւ Եկեղեցւոյ ծաղկաւէտ բուրաստանին վրայէն:

Ձարչարանք, աքսոր, մահ՝ վերստին իրենց խոժոռ դժմեքը ցոյց տուին ամէն կողմ:

Հեթանոսական հալածանքներէն զատ՝ Եկեղեցին արիւնեցաւ ներքին երկպառակութիւններէն, հերձուածողներէն, հերետիկոսներէն:

Արիոսի հերետիկոսութեան հետեւանքով, յատկապէս Կոստանդնուսի վաղեմի տաճարէն կախարհերու հրահանգով՝ հալածանքներու նոր ալիք մը խռովեց Եկեղեցւոյ խաղաղութիւնը:

Յաջորդ դարերուն, մեծ անբարեկարգ իշխանք բարբարոս ժողովուրդներու յաջորդական աւերիչ արշաւանքներուն:

Գոթացիներ, Վիսիգոթներ, վանտալներ, սասանեան, արաբական, մոնկոլական, թաթարական, օսմանեան բանակներ, զարեր ամբողջ, իրենց անվերջանալի արշաւանքներու ընթացքին, կողոպտեցին, բանդեցին եկեղեցիներ, աւերակի վերածեցին թրիստոնեայ գիւղեր, քաղաքներ, գերեցին, սուրէ անցուցին Քրիստոսի հետեւող անհամար հաւատացեալներ:

Ո՞վ պիտի կարենայ հաշուել ու կշռել Եկեղեցւոյ ունեցած կորուստները, որ կրեց քաղաքակիրթ կարծուած պետութիւններէն:

Միթէ քիչ վնաս հասցուցին Եկեղեցւոյ՝ միջին դարուն տկար եւ մինչեւ մեր օրերը հասած տեսակ տեսակ աղանդաւորներն ու հերձուածողները:

Կարելի՞ է մոռնալ Փրանսական յեղափոխութենէն, Նապոլէոնի տիրապետութեան չըջնալի Եկեղեցւոյ կրած չարիքները:

Տակաւին մեր յիշողութեան մէջ թարմ են Ստալինեան, Հիթլերեան եւ այլ համայնապար երկիրներու, չըջնալի Սպանիոյ, Մեքսիքայի, Չինաստանի, Հնդկաստանի, Ալբանիայի մէջ, եկեղեցիներու, եկեղեցականներու եւ եկեղեցասէրներու կրած հալածանքները, աքսորի եւ բանտերու մէջ կրած սարսափազդու չարչարանքներն ու մահը, որոնք առաջին դարերու թրիստոնեաներուն չըջնալի յիշեցնեն:

Եւ մանաւանդ, Բոնապարտ մոռնալ, հայ ազգին ունեցած արիւնահոսումը, որ տեսեց զարեր ամբողջ, Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Հայրենիքի ընդհանուր Գողգոթան՝ ցեղային խաչելութիւնը, որ տեղի ունեցաւ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին:

Պատմական անհրաժեշտ իրողութիւն մըն է, որ Բոնապարտ Եկեղեցին, իր ծնունդէն մինչեւ մեր օրերը, ամէն տեղ եւ ամէն ժամանակ, ամէն ազգէն եւ ամէն դասակարգէն, ամէն տարիքէն միլիոնաւոր նահատակներ տուած է, որոնք իրենց ազատ վաճառքի եւ հերոսական քաջութեամբ իրենց արիւնը թափեցին Քրիստոսի հաւատքին համար:

Եւ այս եղելութիւնը եղական երեւոյթ է, որ նմանը չունի որեւէ ուրիշ կրօնաւորութեան պատմութեան մէջ:

Եղելութիւնը եղական է՝ Երբ նկատի առնենք նահատակներու բազմազանութիւնը, հասակի, սեռի, ղադակարգի եւ ցեղի :

Անոնց հոյլին մէջ մենք կը տեսնենք թաղաւորներ, թաղուհիներ, թաղաժառանգներ, պալատականներ, նախարարներ, իշխաններ, զորավարներ եւ զինուորներ, հարուստ ու աղքատ, ծեր եւ մանուկ, ազնուական ու ռամիկ, մանչ ու աղջիկ, տէր ու ծառայ, ազատ ու գերի, չարքաշ ու փափկակազմ, գիտնական ու արքայ, քաղաքացի ու գիւղացի, սպիտակամորթ ու սեւամորթ, քաղաքակիրթ ու յետամընայ ժողովուրդներու պատկանող, ցուրտ ու տաք երկիրներու բնակիչներ :

Նահատակներու այսքան բազմազանութիւնը եւ բազմութիւնը՝ կարեւրի չէ իբր բնական երեւոյթ ընդունիլ, քանի որ ուրիշ ո՛չ մէկ կրօնքի մէջ տեսնուած է նման բան մը :

Ըիչտ է, որ ուրիշ կրօններու մէջ ալ գտնուած են անձեր, որոնք անվարի յանձն առած են մահը՝ քան ուրանալ իրենց կրօնքը : Բայց այս նահատակներուն թիւը այնքան քիչ է, որ վարելի չէ՝ բաղդատութեան որեւէ եղբ գտնել քրիստոնեայ նահատակներու աշխարհածաւալ բազմութեան հետ :

Այո՛, ամէն ազգ ունի իր հերոսները, ընդհանրապէս զարգացած, նկարագրով քաջ, գիտակից այր մարդիկ, որոնք վսեմ գաղափարականի համար, կամաւոր կերպով, զոհած են իրենց կեանքը :

Մարդկութիւնը պանծացնող բազմաթիւ անձեր, գիտնականներ, արուեստագէտներ, հանճարներ գտնուած են ամէն կողմ, բայց մատի վրայ կարելի է հաշուել արձանները այն հերոսներուն՝ որոնք իրենց արիւնը թափելով՝ անմահական անուն թողուցած են աշխարհիս վրայ :

Հերոսութիւնը քիչերուն տրուած է :

Գանք, այժմ, նկատի առնելու ուրիշ կէտ մըն ալ, որ է քրիստոնեայ նահատակներուն կրած չարչարաններու սաստկութիւնը եւ այլազանութիւնը, որոնց նմանը եւս չենք հանդիպիր միւս կրօններու պատմութեան մէջ :

Ամէն տարիքի եւ ղադակարգի պատկանող միլիոնաւոր մարդիկ, ի՞նչպէս կրնան գիմանալ իրենց ոյժերէն վեր ելող ահաւոր չարչարաններու, եթէ Աստուած յատուկ ոյժ չտայ անոնց :

Մեր խօսքը, կը կրկնենք, քանի մը դիւցազնական ուղիով օժտուած մարդոց մասին չէ, որոնք, ինչպէս ըսինք, բացառութիւններ են, այլ ալիքաբոյ ծերերու եւ տխրոյ մանուկներու, փափկասուն օրիորդներու, տիկիներու եւ այլ տկարակազմ անձերու մասին է, որոնք քերամաղկայիս քաջութեամբ կը դիմագրաւեն սահմուկեցողից ցաւեր, տանջանք ու մահ :

Անխարկելով Աստուծոյ յատուկ միջամտութեան, միթէ Յիսուս չէ՞ր մարգարէացած եւ լրսած. «Ձեր վրայ ձեռք պիտի բարձրացնեն, պիտի հալածեն ու մատնեն ձեզ ժողովարաններու եւ բանտ պիտի նետեն: Պիտի տանին ձեզ Թաղաւորներու եւ դատարաններու առջեւ՝ իմ անուանիս համար: Ասիկա վկայութեան առիթ պիտի ըլլայ ձեզի: Արդ, ձեր միտքը զբէ՛ք. մի՛ մտահոգուիք ձեր պաշտպանութիւնը կանխաւ պատրաստելու համար: Ես պիտի տամ ձեզի խօսք եւ իմաստութիւն, որուն պիտի չկարենան հակառակիլ կամ ընդդիմադրօքիլ ձեր հակառակորդները: Պիտի մատնեն ձեզ, նոյնիսկ ձեր հայրերն ու մայրերը, ձեր եղբայրները, ձեր ազգականները եւ ձեր բարեկամները ու ձեզմէ շատեր մահուան դատապարտել պիտի տան» (Ղուկաս ԻԱ. 12-16), «Մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը վրէպակնեն, բայց հոգին չեն կրնար սպաննել» (Մատթ. Ժ. 28):

Արդարեւ, Աստուծոյ զօրութեամբ զրահաւորուած, ինչե՞ր չքաշեցին Քրիստոսի վկաները, ինչպիսի՞ քաջութեամբ դիմացան աներեւակայելի ամէն տեսակ տանջանքներու եւ արժանացան մարտիրոսական սպակին:

«Այն քրիստոնեաները, որոնք քաղաքացի փին՝ կը գլխատուէին (ինչպէս Պօղոս առաքեալ). միւսները վը նետուէին ամփիթատորներու մէջ, գազաններու առջեւ, ողջ ողջ կ'այրուէին, կը խաչուէին կամ կը չարչարուէին հին բարբարոսութեան բազմահնար տանջանքներով: Դահլիճները ջէին խնայել ո՛չ հասակի, ո՛չ սեռի: Ծերերը կը նստեցնէին երկաթէ հրաշէկ աթոռներու վրայ: Ծաղկատի օրիորդներ՝ առիւծներէ պատառ պատառ կ'ըլլային վրամ ցուներու կոտորով կը վիրաւորուէին, եւ խուժանը մեծապէս կը հրճուէր այս չարչարանական կը ներկայանային կուսակալներու ատենին առջեւ եւ մահը կը նկատէին իբր Աստուծոյ պարգեւ մը, որ թոյլ կու տար իրենց այսպէս հրապարակաւ յայտնելու թէ իրենք քրիստոնեայ են: Ասոնք մարտիրոսներ էին, այսինքն Քրիստոսի աստուածութեան վկաներ: Կ'օրհնէին իրենց հալածիչներն ու ստէպ տէրմադրաւ Վ'ըլլային օոսկալի չարչարանքներու՝:

Այս մարմնական չարչարանքներու վրայ պէտք է աւելցնել նաեւ հոգեկան ու բարոյական տառապանքները:

Արդարեւ, անոնց մէջ կային ազնուական բարձր դասակարգի պատկանողներ, հարուստ եւ տէր կարուածներու, որոնք, լնակաւն է, պիտէին մարմնական վայելքները, ընտանեկան կեանքի քաղցրութիւ-

1. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ Է. ՍԱՀԱԿ, Հիմ Պատմութիւն, Արեւիք, Յովնատամ, Հռոմ, Վեներիկ, 1917, էջ 428:

ներ, հարստութեան ընձեռած բարիքները, հանդիստ կեանքի առաւելութիւնները, փառքի հմայքը: Պատուախնդիր էին իրենց անունին եւ բարոյականին, դժայտուն նախատինքի եւ արհամարհանքի հանդէպ:

Եւ սակայն, անոնք ամենամեծ համբերութեամբ եւ երբեմն հըրճուանքով կրեցին ամէն տեսակ նախատինք, անուանարկում, անպատուութիւն՝ իրենց բարեկամներէն, եւ աստելութիւն՝ իրենց մըտերիմներէն:

Իրենց մէջ ալ զօրաւոր էր մայրական, հայրական եւ որդիական զգացումները:

Պատահեցան դէպքեր, որու ընթացքին մայրը կամ հայրը իր տղուն դէմ ելաւ, տղան իր ծնողքին դէմ: Տեղի ունեցան սրտաճմլիկ տեսարաններ, երբ ծնողը, նշանած կամ մտերիմ, աղեխարշ աղաչանքներով կը յորդորէին իրենց սիրելիները, որպէսզի ուրանան Քրիստոսը:

Բայց անոնք, հոգեկան ահաւոր դալարումներով՝ Քրիստոսի սէրը զերադասեցին՝ ծնողական, որդիական եւ երկրաւոր բոլոր սէրերէն, արհամարհելով փայլուն խոստումներ, հանդստաւէտ վեանք եւ հարստութիւն:

Օրինակ մը միայն տանք՝ ցոյց տալու համար թէ ո՞րքան անմարդկային եւ ահաւոր էին նահատակներուն տրուած տանջանքները, եւ անոր հակառակ ո՞րքան մեծ էր այն քաջութիւնը՝ որով անոնք կը դիմադրաւէին ամէն տեսակի տանջանք:

Ս. Լաւրենտիոսի վարքին մէջ կը կարդանք թէ զահիճները դինք կասկարայի հրաշէկ երկաթին վրայ դրած են, կրակի չարչարանքով մեռցնելու համար զինք: Քակ անմահ սուրբը, գերբնական զօրութեամբ դիմանալով այդ կրակին, կատակելով կ'ըսէ զինք չարչարողներուն. «Մարմինիս մէկ կողմը փութեցաւ, հիմա միւս կողմը դարձուցէք»²:

Հոս չենք փափաքիր մանրամասնօրէն ներկայացնել սարսուռ պատճառող այն բոլոր չարչարանքները, որոնք մեռնելէ առաջ կրեցին մարտիրոսները, որոնցմէ շատեր խեղդամահ եղան, ողջ ողջ թաղուեցան, անդամատուեցան, աչքերնին փորուեցան, միսերնին եւ եղունգնին փերթ փերթ փրցուեցան, կրակով տաղուեցան, ջրամոյն եղան, դաղաններէն թըլտուեցան, ծանր աշխատանքներու դատապարտուեցան, յիսապարտութեան ծանր պատիժին ենթարկուեցան, կախուեցան, խաչուեցան եւ այլ լազմապիսի տանջանքներով հոգինին աւանդեցին, ազօթելով եւ ներելով իրենց զահիճներուն:

Ասոնք բոլորն ալ մէյ մէկ ջահակիր մկաններն են Քրիստոսի աստուծութեան:

Եւ նկատելու է, որ ասոնք ուրացութեան մէկ խօսքով, դիւրաւ կրնային ազատիլ այդ սրտաճմլիկ տանջանքներէն:

Մեռան բայց չուրացան, չարչարութեան քայց ստեղծէ չտուին:

Խօնչ էր արդեօք, որ զիրենք մղեց այս հերոսական արարքին:

Նախ այն խոր համոզումը, որ Քրիստոս լիակատար Կեանքն է, Ճշմարտութիւնն է, Յաւերժութիւնն է: Մակ երկրաւոր կեանքը՝ իբր բոլոր հաճոյքներով ու զուարճութիւններով, իր փառքերով ու հարկաւորութեամբ՝ սին է, ստապատիր է:

Հետեւաբար, անխորհուրդ եւ անմիտ մարդու գործ պիտի լլլար թողուլ իրական եւ յաւերժական երջանկութիւնը եւ զայն փոխանակել անցաւոր ունայնութեամբ:

Սողոմոն իմաստուն երկրաւոր բոլոր հաճոյքները վայելելէ ետք, չըսա՞ւ միթէ. «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» (Ժողով. Ա. 1):

Պօղոս առաքեալն ալ կ'ըսէ. «Ինծի այնպէս կը թուի թէ ներկայ ժամանակի չարչարանքները, համեմատութիւն չունին այն փառքին հետ» որ պիտի յայտնուի մեր մէջ» (Հռ. Ը. 18):

Ահա, այս վարդապետութեամբ անտօ մարտիրոսները արհամարհելով մահը, հերոսական կեցողածը ցոյց տուին, որ զարմանք կը պատճառէր իրենց պահիճներուն եւ ակամաստեա հեթանոսներուն:

Առաջին դարերէն մեղի հասած է հետաքրքրական գրութիւն մը, որ կ'արժէ ներկայացնել հոս:

Գրութեան հեղինակը քրիստոնեայ գրող մըն է, որ անվախ՝ ամփիթատրոն կ'երթայ, կը նստի հեթանոս հանդիսատեսներու մէջ, դիտելու համար քրիստոնեաներուն տրուած չարչարանքները:

Անիկա, միեւնոյն ատեն մտիկ կ'ընէ ներկաներուն խօսակցութիւնները եւ գրի կ'առնէ զանոնք:

Ի տես քրիստոնեայ մարդու մը չարչարանքներուն, հեթանոս մը կ'ըսէ քովիններուն. «Կը խորհիմ թէ՛ սա մարդը զաւակներ եւ հարս մը ունենայ. .եւ սակայն ո'չ հայրական սէրը, ոչ ալ ամուսնական մը ունենայ. .եւ սակայն ո'չ հայրական սէրը, ոչ ալ ամուսնական մը ունենայ. .եւ զիրեք խախտելու: Հոս ուսումնասիրելու բան մը սէրը բաւարար ան զիրեք խախտելու: Հոս ուսումնասիրելու բան մը կայ, ոյժ մը, որ պէտք է մինչեւ խորը քննել: Կարելի է պարզապէս նկատի առնել կրօնը մը, որուն համար մարդ տառապի եւ մահը յանձն առնէ»:

Ուրիշ հեթանոս մը կը խորհրդածէ բարձրաձայն. «Բան մը կայ, չեմ գիտեր թէ ինչ բան, որ ամուր կը բռնէ այս քրիստոնեաները, որ ստեղծ չտան նման տանջանքի եւ կրնն այսպիսի չարչարանքներ»:

Այն հեթանոսը ճիշտ կը խօսէր. հոս ուսումնասիրելու բան մը կայ, քաջութիւն մը, որ մինչեւ խորը պէտք է գննել:

Բայց այս բանը մենք գիտենք թէ ինչ է, ինչ կրնայ ըլլալ: Այս բանը ուրիշ բան չէ եւ ուրիշ բան չի կրնար ըլլալ, անթէ ոչ Աստուծոյ

յատուկ միջամտութիւնը, որով իւր սնուցանէ խոստովանողներուն ոյժը, որ ունին Քրիստոսի աստուածութեան հանդէսը. այս բանը՝ Աստուծոյ կողմէ գործուած բարոյական հրաշք մըն է:

Եւ որովհետեւ Աստուած յատուկ միջամտութեամբ եւ բարոյական հրաշքով չի կրնար հաստատել եւ կնքել սխալ մը, պատրանք մը, ուրեմն մեր մարտիրոսներու հաւատքը ճշմարտութիւն է, ուրեմն Քրիստոս ճշմարիտ Աստուած է³:

Կ'ընդունինք թէ հայածանքներու շրջանին, տանջանքներու ծանրութեան ներքեւ կամ մահուան սպառնալիքին առջեւ, եղան հաւատացեալներ, որոնք թուլցան, չէրիմացան եւ տկարանալով իրենց բարոյական ոյժը՝ ուրացան իրենց հաւատքը:

Այս ուրացութիւնները նախ ցոյց ձու տան, որ անոնք ալ մեղի պէս սովորական մարդիկ էին, մեղի նման կաշի ոսկր ունէին եւ լոգձալուն էին տանջանքներուն հանդէպ: Ամէն մարդ, նոյնիսկ առաքինի եւ աստուածավախ, չէր կրնար դիմանալ այնքան արհաւիր տանջանքներուն, եթէ Աստուած, մասնաւոր շնորհքով չօգնէր անոր:

Յետոյ, քաղդաստմաբ մահը քաջութեամբ յանձն առնողներուն՝ շատ քիչ էր ուրացողներուն թիւը: Օրինակ մը տալու համար յիշենք, որ Սեբաստիոյ քառասուն մանկներէն միայն մէկը ուրացաւ, իսկ մնացածները՝ բոլորն ալ հաւատարիմ մնալով իրենց հաւատքին, մեռան սառուցեալ լիճին մէջ:

Իսկ ուրիշ ուրացողներ, իրենց անկումէն ատը, վերականգնեցան եւ իրենց օրինակելի կեանքով, խիստ ապաշխարութեամբ՝ սրբեցին իրենց ուրացութեան մեղքը եւ սուրբի մահով մեռան:

Աւելցնենք նաեւ թէ Ընդհանրական Եկեղեցւոյ Յայամարտընեբու ամէնէն փայլուն էջերէն մէկը՝ կը պատկանի Հայերուն:

Մենք հայերս, արդար հպարտանքով կրնանք պարծիլ, որ շատ մը ազգերէն աւելի նահատակներ, արիւնի վկաներ տուած ենք Քրիստոսի հաւատքին համար:

Առաջին ազգն ենք, որ չորրորդ դարու սկիզբը, պետականօրէն, թազաւոր, իշխան եւ Ժողովուրդ՝ ազգովին ընդունեցանք Քրիստոսի կրօնը, եւ այդ օրէն մինչեւ այսօր, տեւականօրէն արիւն թափած ենք մեր հաւատքին համար:

Ո՞ր ազգի պատմութեան մէջ, Ս. Վարդանանց հերոսամարտի նման տեղի ունեցած է սրբազան պատերազմ մը, որու ընթացքին ամբողջ Ժողովուրդ մը, մեծով պզտիկով ծառացած ըլլալ իրմէ տապաւնաւոր աւելի մեծ ազգի մը դէմ, ոչ թէ նիւթական փառքի, մարդկային հարստութեան կամ հողեր գրաւելու, այլ միմիայն խղճի ու կրօնքի ազատութեան համար:

Եւ երկար դարերու ընթացքին, քանի քանի անդամներ, խուժ-
դուժ ազգերու հրոսակներ, կատաղի ալիքներու նման Եկան արիւնի
ծովին մէջ խեղդելու համար հայ հաւատքը, բայց նա ապառաժի
մը նման մնաց անսասան:

Եկաւ նաեւ փոթորիկներու ամէնէն կատաղին, 1915ի եղեռնը,
որ ուզեց երկրիս վրայէն բնաջինջ լնել հայը եւ անոր վրօնքը, ար-
մատէն վրել հայ ազգին դարաւոր, մշտադալար ծառը: Այո՛, կո-
տորոնց այդ ծառին ճիւղերը, բայց արմատը անխախտելի մնաց,
եւ օրէ օր կը շարունակէ ուռճանալ նորարողութեւ ճիւղերով, նոր կե-
սունակութեամբ:

Աւերեցին մեր լինանեկան բոյները, հիմնալատակ կործանեցին
մեր եկեղեցիները, բայց ամէն կողմ նոր եկեղեցիներ բարձրացան՝
հայկական երկնասլաց զմբէթով:

Եւ այսպէս, բոլոր ազգերու նահատակներուն աստղահոյժը,
բարձրաձայն եւ հեշտալուր երգչախումբն է, որ կ'երգէ յաւերժա-
փայլ փառքը Յիսուսի աստուածութեան:

Բիւրաւոր մարտիրոսներու արիւնով է կեցուած, վաւերացուած,
թէ Քրիստոս իսկապէս Աստուծոյ Որդին է, որ Եկաւ փրկելու աշ-
խարհ՝ դժոխքի անշիջանելի վրակներէն:

Այսքան քաղմաթիւ վկաներու արիւնը, բարձրադու իշարադակէ
թէ ստութիւն, խաբէութիւն չկայ Յիսուսի վարդապետութեան մէջ,
եւ թէ արիւնի այս վկայութիւնը ամէնէն ջինջ, ամէնէն լուսաւոր
փաստն է Եկեղեցւոյ յաւերժութեան:

Հոս, պէտք է աւելցնենք նաեւ ուրիշ երեւոյթ մը, որ է Եկե-
ղեցւոյ սուրբերուն բազմութիւնը, որ ուրիշ առանձին զօրաւոր փաստ
մըն է Քրիստոսի վարդապետութեան աստուածային լլլալուն:

Եկեղեցին ոչ միայն անհամար մարտիրոսներ տուած է, այլ նաեւ
անհամար սուրբեր, որոնք թէեւ առիթը չեն ունեցած իրենց արիւնը
Թափելու Քրիստոսի համար, բայց հերոսական առաքելութիւննե-
րով՝ մարտիրոսներու չափ եւ անոնց նման հրաշալի դարձեր, հրաշ-
ներ կատարած են եւ հրեշտակային մաքուր կեանք մը անցուցած են
երկրիս վրայ:

Մարտիրոսը մէկ անգամ իր արիւնը թափելով երկինք դացած է,
մինչդեռ այս սուրբերը ամէն օր, նոյն հաւատքով լի, միշտ պա-
տրաստ իրենց արիւնը թափելու, լլլա՛յ ճշմարտական, լլլա՛յ առա-
քելական կեանք մը անցուցած են, դիւցազնական կեանք մը, որ նա-
խանձը կը շարժէ նոյնիսկ հրեշտակներուն:

Օրինակ, Ս. Աստուհ անապատական եւ իրեն նման բիւրաւոր
ճշմարտներ, անապատներու, անձաւներու մենութեան մէջ, զուտ
աղօթքի, խիստ ճշնութիւններու կեանք մը վարած են, որ կը զար-
մացնէ սոսկական մահկանացու մարդը:

Գրիգոր Լուսաւորիչ եւ իրեն նման անթիւ սուրբեր, թէեւ առիթը չեն տւեցած իրենց արիւնով մարտիրոսանալու, մարտիրոսի չարչարանքներ կրած են, մահացեալ կեանք մը անցուցած են եւ անձնադուհոյութեան, եղբայրասիրական գործերու հոյակապ օրինակներ եղած են սրբութեան:

Անթիւ Լուսաններ, կամաւոր կերպով, ինքիւնքին զրկելով մարմնական բոլոր հաճոյքներէն, յետամնաց ժողովուրդներու եւ հիւանդանոցներու մէջ, իրենց ամբողջ երկտասարդութիւնը կը մաշեցընեն՝ ի սէր Քրիստոսի, ի սէր մարդկութեան:

Լսեցէք սա իրական պատմութիւնը, որ լաւաւորն կերպով կը բացատրէ մեր ըսածը:

Օր մը, իշխանադուն մը, ձիով որսի կ'երթայ անտառները: Հոն կը հանդիպի անակի մը, որուն մէջ կը առնէ երկտասարդ գեղանի օրիորդ մը եւ գարշահոտ վէրքերով հիւանդ մը:

Իշխանին գաւազնի նախ կը կարծէ թէ հիւանդը օրիորդին հայրը եւ կամ անոր մէկ հարազատն է: Քայց ստուգելէ հետք թէ օրիորդը պարզ հիւանդապահ մըն է, կը հարցնէ անոր թէ իրեն ի՞նչ կը վճարեն այդ ծառայութեան փոխարէն:

Աղջիկը, փոխանակ պատասխանելու հարցումին, սողուն կը հարցընէ թէ ինք ինչ կը կարծէ որ իրեն կը վճարուի այս հիւանդը խնամելուն համար:

- Հարե՞ւր ոսկի:
- Ո՛չ, կ'ըսէ օրիորդը:
- Երկու՞ հարիւր ոսկի:
- Ո՛չ:
- Հազա՞ր ոսկի:

— Ի՞նչ հազար, ի՞նչ երկու հազար ոսկի: Ես միայն ի սէր Յիսուսի եւ յաւիտեանական կեանքը շահելու համար զոհած եմ կեանքս:

Այսպիսի անթիւ հոգիներ, սովորական մարդոցմէ կը զանազանուին իրենց բացառիկ նուիրումովեամբ, ինքնամոռացութեամբ եւ մաքուր սիրոյ դադաթնակէտին հասած բազմապիսի առաքինութիւններով:

Սոսկ մարդկային ոյժերով կարելի չէ բացատրել՝ թէ ինչպէս աշխարհն փառմութեամբ սուրբեր, արքութեան գերաւորն աստիճանին կը հասնին, սուրբեր, որոնցմէ շատեր, նախապէս անկարգ եւ դայթակազային կեանք մը անցուցեր են:

Ուրեմն, ակէտք է ընդունելնք, որ քրիստոնէութիւնը աստուածային ոյժ մը ունի, անսպառ աղբիւր է մշտանորոգ կենսունակութեան եւ հոգեկան զօրութեան, որով այնքան մեղաւորներ, ախտաւորներ, կամե՞ով աղար հոգիներ, անոր փենսատու աւելչով եւ ջերմութեամբ

կերպարանափոխ կ'ըլլան, կը սրբանան, կ'աստուածանան, քիչ մը ամէն տեղ եւ ամէն ժամանակ:

Այդ անսպառ կենսունակութիւնը կը շարունակուի նաեւ մինչեւ այսօր:

Անոր շնորհիւ, տակաւին բազմաթիւ հոգիներ, արհամարհելով երկրաւոր ամէն բարիք, յանձն կ'առնեն խաչեալ Յիսուսի խաչելութեան կեանքը շարունակել երկրիս վրայ:

Այս երեւոյթն ալ, շատ մը ասպացոյցներու կարգին, համոզիչ փաստ մըն է, որ ցոյց կու տայ թէ Գրիստոսի կրօնըը աստուածային ծաղրում ունի: Ան՝ Աստուծոյ տեւական հրաշքն է, տղին է, որ միշտ առկայ է Եկեղեցւոյ մէջ եւ վը շարունակէ մարդկային անկեալ բնութիւնը բարձրացնել հրեշտակներու բնութեան, եւ մարդս ընել ուրիշ Գրիստոս մը:

(Շար. 17)

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Résumé

L'EGLISE DES MARTYRS

P. EPHREM DER-GHAZARIAN

Dans les articles précédents, l'auteur nous a démontré la filiation divine de Jésus-Christ: Le Christ est Fils de Dieu. Comme preuve à cette affirmation, l'auteur nous a donc énuméré les multiples miracles perpétrés par le Christ et surtout sa Résurrection. En ce 17^e article, il vient nous ajouter une nouvelle preuve à la filiation divine du Christ: la divinité de sa doctrine, de son enseignement.

La grande preuve de la divinité de la doctrine du Christ est la réalité des milliers et milliers de martyrs chrétiens qui, durant les siècles, ont versé leur sang comme témoignage de leur foi envers la Résurrection du Christ.

Le martyr, toujours vivant dans le monde actuel, est un miracle continu perpétré par Dieu, et est toujours présent en l'Eglise d'aujourd'hui. Il sert à élever la nature humaine déchue par le péché, et à réaliser le mystère de la rédemption.